վերա ձեր եւթնպատիկ, և լցուսցէ զձեզ ամենայն բարութեամբ. Բարձցէ ի ձէնջ զամենայն ցասումն և զպատուհաս և զտարաժամ մահ. Տացէ ձեզ շինութիւն, անդորրութիւն և խաղաղութիւն, և ավագաց ձեր ի վերա քաղցրութիւն. բուսոց և ծառոց տնկոց այնողութեամբ և քաջ պտղաբերութիւն. պայծառեղէն անասնոց ձեր՝ անսղալ ծննդականութիւն և ամենայն բարեաց լիութիւն և առողջութիւն։ Արասցէ և զբանաւոր երկիրդ ձեր գործնականս և արդենականս, գործել զարդարութիւն, և զամենայն գովելի տեսակս առաքինութեան։ Եւ աւրհնեսցէ զձեզ զամենեսեան առ հասարակ հոգւով և մարմնով. որպէս զի զառաւրայս բարեօք վայելելով, և երկնից թագաւորութեանն և արքայութեանն հասանիցէք ձերաւք ննջեցելաւքն, ընդ ամենայն Սուրբս, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որ է աւրհնեալ ամենայն ի յաւիտեանսն։

Շնորհեցաք և ի ձեռն արքեպիսկոպոսիս ձեր Տէր Գրիգորիդ՝ ձեզ պատուական պարգեւս հոգեւորականս, զեղն սուրբ աւծութեան՝ ըզսրբալոյս և զաստուածագործակ զսուրբ Մեռոնն, զոր Հոգին Սուրբ արասցէ ի լուսաւորութիւն նորածնելոցն աւազանաւն յորդէգրութիւն Հաւրն երկնաւորի, և ի ժառանգակցութիւն Քրիստոսի յուսոյն մերոյ. զնոյնն ի ճակատ նշան հաստատութեան, և ի յաւծումն քահանայից, և ի նորոգումն եկեղեցւոյ։ Եւ յամենայն ամի նոր առցէ ի մենէ, և զհինն ի նորն խառնեսցէ. ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

Գրեցաւ գիր աւրհնութեան հրամանիս մեր ի մարմնաւոր ծնընդեան Յիսուսի Քրիստոսի ի ՌԳՃԿԴ (*) ամին, և ի Սրբոյն Գրիգորի ՌՀԴ ամի. և ի Թվիս ՊԺԳ, ի յամսեանն յունվի. ԺԵ. ի մեր կաթաւղիկոսութեանն՝ որ է ամ և կէս և աւր Ի (քսան)։ Եւ վասն առաւել հաստատութեան՝ իմով կամաւ ձեռնադրեցի ստորև մերով սովորական կարմիր ձեռնագրաւս. և կընքեցաւ վերոյ տիրական մեծ մատանաւս, կամաւք բարերար մարդասիրին Աստուծոյ աւրհնելոյն յաւիտեանս և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

† ՄԵՍՐԱՒՊ ՇՆՈՐՀԱՒՔՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅԱՍՏԱՆԱՑ

Կոստանդին կաթողիկոսի համառօտ գրածն ի ներքեւ Մեսրովպայ գրածին, ըստ իր ըսածին՝ «Գիր հոգեւորական հրամանի աւրհնութիւնն է և » կրկին հաստատութիւնն », իր նախորդին վերոգրեալ կոնդակին. յորում կ'իմացընէ որ անոր ընտրած եպիսկոպոսն Գրիգոր՝ եկաւ առ ինքն, կոնդակն ի հետքը բերելով. Կոստանդին այլ ստորագրելով (Կաթողիկոս ամենայն Հայոց) ի ԺԵ յանուարի, ի թուին ՊԻԳ (1375) կու հաստատէ զնոյն Գրիգոր յառաջնորդութիւն իւր թեմին, և օրհնելով զթեմականսն՝ կու դարձընէ ի տեղն։ Վիճակաց անուանքն այլ գրէ, Լոռ, Աշտարակիր և Լուցկայ։

* Թուականաց տասնորդական թիւերը՝ կամ հին կամ նոր ձեռք մի փոխեր է, տասն տասն թիւ աւելցընելով, որպէս զի կոնդակին ներքեւ գրուած Կոստանդին կաթողիկոսի թուականին յարմարին. ըստ այնմ և ամսոյն օրը յանուարի ԺԵ ըրեր է, բնագրին մէջ ինչ ըլլալն չիմացուիր։